Նախագիծ 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՔՍԱՏԱՆ ՄԵՂՐՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204.1 հոդվածին, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24-րդ, 48.1-րդ, 73-րդ, 76-րդ հոդվածներին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին <<Դյութի Ֆրի Ալիանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր առանց մրցույթի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրու մաքսային կետի՝ Սյունիքի մարզ, Կարճևան գյուղի Մայրուղի-4 հասցեում գտնվող տարածքից՝ 800 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասում Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված անմաքս առևտրի խանութ և նրա պահեստային տարածք կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝

ա. կառուցապատման իրավունք ձեռք բերած անձը հողամասի վարձակալության իրավունք է ձեռք բերում 49 տարի ժամկետով, հողի կադաստրային գնահատման արժեքին հավասարեցված տարեկան վարձավճարով.

բ. կառուցապատման իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի.

գ. կնքվող պայմանագրում պետք է ներառել քաղաքաշինական նորմերի, կառուցապատման հատուկ պայմանների և քաղաքաշինական սահմանափակումների վերաբերյալ դրույթներ՝ կապված կառուցապատվող տարածքը հատուկ նշանակության հողեր համարվելու հետ:

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ այն իրականացնելով <<Դյութի Ֆրի Ալիանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաշվին:

Ա. Ալավերդյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՔՍԱՏԱՆ ՄԵՂՐՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անհրաժեշտությունը (նպատակը).

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է վերջին շրջանում Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև տուրիզի զարգացման հանգամանքով, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրու մաքսային կետով ուղևորվող քաղաքացիների սպասարկման և նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի իրականացման համար բոլոր նպաստավոր պայմանները ստեղծելու անհրաժեշտությամբ:

1.1. Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս Մեղրու մաքսային կետում անմաքս առևտրի խանութ չի գործում, որն անհրաժեշտ է ուղևորաշրջանառության ավելացման ներկա փուլում:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Առաջարկվում է թույլատրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին «Դյութի Ֆրի Ալինաս» ՍՊԸ հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր՝ 49 տարի ժամկետով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրու մաքսային կետի տարածքում ՀՀ մաքսային օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված անմաքս առևտրի խանութ և նրա պահեստային տարածք կառուցելու նպատակով:

2. Կարգավորման առարկան.

Կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության տարածքից Իրանի Իսլամական Հանրապետություն մեկնող ուղևորների համար Հայաստանի Հանրապետության տարածքում առևտուր իրականացնելու համար նպաստավոր պայմանների ստեղծման և արտաքին ապրանքաշրջանառության խթանման հետ կապված հարաբերություններն են:

3. Ակնկալվող արդյունքները.

Որոշման ընդունման դեպքում ակնկալվում է բարելավել սահմանային անցումային կետում ուղևորների սպասարկման որակը և խթանել սահմանը հատող ուղևորներին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում առևտուր իրականացնելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՔՍԱՏԱՆ ՄԵՂՐՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրու մաքսային կետի տարածքից առանց մրցույթի կառուցապատման նպատակով հողամաս տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, և այն համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՔՍԱՏԱՆ ՄԵՂՐՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրու մաքսային կետի տարածքից առանց մրցույթի կառուցապատման նպատակով հողամաս տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ

ԱՄՓՈՓ - ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՔՍԱՏԱՆ ՄԵՂՐՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը այլ մարմինների հետ համաձայնեցման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	*Գրության ստացման ամսաթիվը, համարը*	*Առարկության. առաջարկության բովանդակությունը*	*Եզրակացություն*	*Կատարված փոփոխությունները*
ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	15,04,2011թ. N01/13.26/829-11	նախագծի նախաբանից հանել <Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սյունիքի տարածաշրջանային մաքսատան Մեղրու մաքսային կետի տարածքում կառուցապատման նպատակով << Դյութի Ֆրի Ալինաս> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հողամաս տրամադրելու մասին> բառերը	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	16.04.2011թ. N01/15.2/1591-11	Առաջարկություններ չկան, կառուցապատման նպատակով հողամասի տրամադրումը կատարել ապահովելով ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության մասին>> N 968-Ա որոշմամբ սահմանված պահանջները	Հաշվի է առնված	

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	20.04.2011 N11/218	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	30.04.2011թ. N01/13.2/3708-11	Առաջարկություններ չկան, կառուցապատման նպատակով հողամասի տրամադրումը կատարել ապահովելով ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության մասին>> N 968-Ա որոշմամբ սահմանված պահանջները	Հաշվի է առնված	
ՀՀ արդարադատության նախարարություն	12.05.2011թ. N01/2815-11	1.Որոշման նախագծի նախաբանում «204[1]» և «48[1]» թվերն անհրաժեշտ է փոխարինել «204.1» և «48.1» թվերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները: 2.Որոշման նախագծի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

ՀՀ ԿԱ ՊԵԿ